ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ք.Երևան **«15» հունվար 2024թ.**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ ՀԱՊՀ-2024/1

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ

Մասնակից՝ Լայվ գրուպ ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-23/31

Առարկան՝ Նյութեր, սարքեր և հարակից պարագաներ

Գործի նախապատմություն

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար համակարգչային տեխնիկայի և պարագաների գնման նպատակով 2023 թվականի դեկտեմբերի 11-ին հայտարարվել է «ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-23/31» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

➢ Ընթացակարգին հայտ է ներկայացրել «Լայվ գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Մասնակից): Մասնակցի հայտում 4-րդ չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի կտրիչների քանակը նշված է 5 կտոր, այն ինչ հրավերով սահմանված է եղել 180-211 կտոր, ինչպես նաև ներկայացված լիազորագիրը ստորագրված է լիազորվող անձի կողմից (Մասնակցի հայտը կցվում է):

«Լայվ գրուպ» ՍՊԸ-ն 4-րդ և 5-րդ չափաբաժինների գծով հանդիսացել է նվազագույն գնային առաջարկ ներակայացրած Մասնակից: Մասնակցին տրամադրվել է մեկ աշխատանքային օր արձանագրված թերությունները շտկելու համար: Շտկման համար նախատեսված ժամանակի ավարտից հետո, արձանագրվել է, որ Մասնակիցը շտկում չի իրականացրել:

Մասնակցի հայտը 4-րդ և 5-րդ չափաբաժինների գծով մերժվել է և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարությունը հրապարակվել է www.gnumner.am կայքում 2024թվականի հունվարի 4-ին:

Եզրակացություն և եզրահանգում

Համաձայն ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ կետի

«Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ……, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները»:

Սույն ընթացակարգի շրջանակներում Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են ներքոնշյալ անհամապատասխանությունները.

- 4-րդ չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի կտրիչների քանակը նշված է 5 կտոր՝ հրավերով սահմանված 180-211 կտորի փոխարեն
- ներկայացված լիազորագիրը ստորագրված է լիազորվող անձի կողմից:

Համաձայն ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 42-րդ կետի՝

Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: **Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է**...

2023 թվականի դեկտեմբերի 28-ին Մասնակցին տրամադրվել է մեկ աշխատանքային օր շտկում իրականացնելու համար, որի ընթացքում շտկում չի իրականացվել (արձանագրության հրապարակման արտատպումը կցվում է):

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության՝ «... գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը **կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը** ...»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6) ենթակետի «ա» պարբերությամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Լիազորված մարմնին ներկայացնել «Լայվ գրուպ» ՍՊ ընկերությունը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով ընդգրկելու համար:

ՌԵԿՏՈՐ **Գ.Պ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**